ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, (0322)68941, fioletovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 08

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 Թ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՝՝Տեղական ինքնակառավարման մասին՝՝ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Ֆիոլետովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ֆիոլետովո համայնքի 2022-2026 թ-ի զարգացման հնգամյա ծրագիրը:
2.

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԼՈԽԻՆՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՆՈՎԻԿՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՉԻՉՅՈՎ ՄԻԽԱԻԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ
2022-2026ԹԹ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

2022 -2026 ԹԹ.

Կազմեց համայնքի ղեկավար Ալեքսեյ Չիչյովը

Քննարկվել և հաստատվել է Ֆիոլետովո համայնքի ավագանու 2022թ-ի ապրիլի 22-ի նիստի թիվ 08-Ն որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ուղերձ....3
2. ՀՆգամյա ծրագրի նպատակները....4
3. Համայնքի իրավիճակի նկարագրություն....5
   3.1 Ժողովրդագրություն.... 6
   3.2 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները....8
   3.3 Տեղական ինքնակառավարման մարմիններ....9
   3.4 Կրթություն, մշակույթ, սպորտ....10
   3.5 Ճանապարհներ....10
   3.6 Հողօգտագործում, գյուղատնտեսություն, շրջակա միջավայրի պաշտպանություն....10
   3.7 Առողջապահություն, սոցիալական վիճակ....11
   3.8 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը....11
   3.9 Համայնքին հիմնական վտանգ ապառնող փոփոխությունները....11
4. Համայնքի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները....12
5. Համայնքի հիմնական նպատակներ....13
6. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ....14
   Ծրագիր 1....14
   Ծրագիր 2....15
   Ծրագիր 3....16
   Ծրագիր 4....17
7. ՀԶԾ ֆինանսավորում....18
8. ՀԶԾ մոնիթորինգ....18

1.ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Տեղական ինքնակառավարման մարմիններում արդյունավետ կառավարում իրականացնելու գլխավոր պայմաններից մեկը՝ գործունեության համաչափ ծրագրավորումն է գալիք ժամանակաշրջանի տարբեր հատվածներով: Սահմանափակ ֆինանսների արդյունավետ ծախսումը, նոր միջոցների ներգրավումը հարկերի հավաքագրմամբ, կնպաստեն համայնքի առաջնահերթ խնդիրների լուծմանը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

2022-2026թթ զարգացման պլանի մեջ ներ են գրավելու համայնքի առկա ռեսուրսները, պարտավորությունները, ազգաբնակչության և տեղական առանձնահատկությունները: Հաշվի են առնվում երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը: Համայնքում առկա խնդիրները կլուծվեն հնարավորինս կարճ ժամկետում եթե առկա ֆինանսական միջոցների հետ հնարավոր լինի նաև դոնոր կազմակերպությունների ու ծրագրերի աջակցություն: Ծրագրի մշակման համար կազմակերպվել են հանրային լսումներ, քննարկվել է և հաստատվել ավագանու կողմից:

2.ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ԾԱՌԱՅԵԼՈՒ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

1. Գյուղատնտեսության զարգացմանը, գյուղատնտեսական արտադրանքի ավելացմանը
2. Բնակչության սպասարկման – կոմունալ ծառայությունների բարելավմանը
3. Բնակչության ֆոնդի ավելացմանը, բնակչության արտագաղթի պակասեցմանը
4. Նախադպրոցական, դպրոցական կրթության բարեփոխմանը, մշակութային, մարզական և սպորտային դաստիարակությանը
5. Տրանսպորտային սպասարկման բարելավմանը, փողոցների բարեկարգմանը
6. Համայնքում աղբահանության կազմակերպման և սանիտարահիգենիկ պայմանների ստեղծմանը:
7. Արտակարգ իրավիճակների վերացմանը:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԿԼԻՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ֆիոլետովո համայնքը հիմնադրվել է 1840-ական թվականներին: Համայնքի բնակչության 99.5% ռուսներ են, հայերը 0.5%:

Ֆիոլետովո փռված է Վանաձոր քաղաքից հարավ-արևելք, Վանաձոր -Դիլիջան մայրուղու աջ և ձախ մասերում: Սահմանակից է Տավուշի և Կոտայքի մարզերին և Մարգահովիտ բնակավայրին: Համայնքի տարածքով հոսում է Աղստև գետը: Կլիման բարեխառն է, ամռանը՝ մեղմ և զով, ձմեռը՝ ցուրտ: Առանձին տարիների նկատվում են կիզիչ շոգեր, երբեմն՝ երաշտ՝ իր վնասակար ազդեցություններով: Ձմռանը ճանապարհները չեն փակվում, տրանսպորտային կապը չի ընդհատվում: Հաճախակի են գարնանային վարար անձր-ները, որոնց հետևանքով մեծանում են սողանքները, կարկտահարությունները, ձմռան ցուրտը և այլն: Գյուղը շրջապատված է լեռներով և անտառներով: Գյուղի վարչական տարածքը կազմում է 4430.49 հա, որից վարելահողեր՝ 183.82հա, խոտհարք՝ 650.06 հա, արոտավայր՝ 1143.73 հա և այլն:

Համայնքը 99%-ով գազաֆիկացված է: Համայնքի փողոցները ապահովված են գիշերային լուսավորությամբ: Համայնքի տարածքում առկա են 2 դամբարանադաշտ, որոնցից ''Շաղրուխ'' կողվող տարածքում կան տասից ավելի խաչքարեր:

3.1 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.Համայնքի մշտական բնակչության ընդհանուր թիվը	1258
. տղամարդ	610
. կին	648
. նախադպրոցական տարիքի (0-6 տարեկան)	102
. դպրոցական տարիքի (7-17 տարեկան)	183
. միջին տարիքի (18-60 տարեկան)	824
. 60 տարեկանից բարձր	149
. ընտանիքների թիվը	338
. գրանցված ընտրողների թիվը	805

<u>Բնակչության սոցիալական կազմը</u>

1. Կենսաթոշակառուներ, որոնցից՝		115
	հաշմանդամներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)	6
	միակողմանի ծնողազուրկ երեխաներ	32
	մանկուց հաշմանդամ երեխաներ	3
	միայնակ կենսաթոշակառուներ	5
2.	Պատերազմի մասնակիցներ, վետերաններ, որոնցից ՝	1
3.	Բազմազավակ ընտանիքներ *(3 – ավելի անչափահաս երեխա ունեցող)*	115
4.	Սոցիալական ծառայությունների Վանաձորի տարածքային գործակալության աղքատության ընտանեկան համակարգում հաշվառված ընտանիքների թիվը *(միջինը)*, այդ թվում՝	7
	ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	7

Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 720 մարդ, որոնցից վարձատրվող աշխատանքով զբաղված են 130 մարդ: Հիմնական մասը զբաղված է հողագործությամբ և անասնապահությամբ:

- Ստորև բերված են համայնքի հիմնական եկամուտները՝

Ձեռնարկություններ	Քանակը	Եկամուտներ,հազ.
Խանութներ	2	

- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2021թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	108.2հա	725.2տ
կաղամբ	110 հա	3060տ
բանջարեղեն	112.8 հա	3440տ
միս		120տ
ձու		80 հազ.հատ
մեղր		500կգ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	1284
Այդ թվում կովեր	718
Մանր եղջերավոր անասուններ	
Այդ թվում մայրեր	
խոզեր	
Այդ թվում մայրեր	
թռչուններ	2822
Այդ թվում հավեր	2413
մեղվաընտանիքներ	48

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 141աշակերտ:

Դպրոցն ունի 27 աշխատող:

- Դպրոցին կից գործում է նախակրթարան, ուր հաճախում են 17 երեխա և 1 աշխատող:

- Համայնքում գործում է մեկ բուժկետ, որտեղ աշխատում է բուժքույր և ընտանեկան բժիշկ, ովքեր սպասարկում են համայնքի ամբողջ բնակչությանը:
- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 7 ընտանիքներ,

3.2 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2022	2023	2024	2025	2026
	Ընդամենը եկամուտներ	40368.9 հազ	40368.9 հազ	40368.9 հազ	40368.9 հազ	40368.9 հազ
Ա	Հարկային եկամուտներ	9643.1 հազ	9643.1 հազ	9643.1 հազ	9643.1 հազ	9643.1 հազ
1	Հողի հարկ	4456,2 հազ	4456,2 հազ	4456,2 հազ	4456,2 հազ	4456,2 հազ
2	Գույքահարկ	5074,9 հազ	5074,9 հազ	5074,9 հազ	5074,9 հազ	5074,9 հազ
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	112,0 հազ	112,0 հազ	112,0 հազ	112,0 հազ	112,0 հազ
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ	1681,6 հազ	1681,6 հազ	1681,6 հազ	1681,6 հազ	1681,6 հազ
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Դ	Դոտացիա	28344.2հազ	28344.2հազ	28344.2հազ	28344.2հազ	28344.2հազ
Ե	Եկամուտներ կապիտալ գործառություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

3.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2021թ. հոկտեմբերի 17-ին համայնքի ղեկավար է վերընտրվել Ալեքսեյ Ալեքսեևիչ Չիչյովը: Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման, համայնքի հիմնախամայնքապետարանի աշխատակազմն ունի հետևյալ կառուցվածքը.

Համայնքի ղեկավարի տեղակալ — 1միավոր

աշխատակազմի քարտուղար — 1միավոր

առաջատար մասնագետ — 2միավոր

1-ին կարգի մասնագետ — 2միավոր

տեխնիկական աշխատող — 1միավոր

Աշխատակազմի աշխատողների ընդհանուր թիվը՝ 8 մարդ:

3.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ

Կրթական համակարգը ներառում է 1 միջնակարգ դպրոց: Ընդհանուր միջնակարգ կրթությունն իրականացվում է Ֆիոլետովոյի միջնակարգ դպրոցում: Աշակերտների թիվը կազմում է 141, իսկ աշխատողներինը՝ 27: Դպրոցը ապահովված է հիմնական գույքով: Դպրոցը գազաֆիկացված է, ունի մշտական խմելու ջուր, ունի լոկալ կոյուղի:

Դպրոցի ամենամեծ հիմնախնդիրներից մեկը սպորտդահլիճի անմխիթար վիճակն է:

Դպրոցին կից գործում է նախակրթարան, որտեղ հաճախում են թվով 17 երեխա:

3.5 ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Համայնքային ենթակայության ճանապարհները մոտ 5.5 կմ են, որից՝ խճից և կոպճից՝ 3 կմ, բնահողային 2.5 կմ:

3.6 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հողային տարածքը 4430,49 հա է, որից 2229,43 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, 119,91 հա բնակելի շինությունների տակ հողեր, 41,5 հա արդյունաբերության, տրանսպորտի և կապի, 1914,83 հա անտառային և ջրային ֆոնդ: Բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսական աշխատանքներով՝ հիմնական զբաղմունքը անասնաբուծությունն է և բանջարաբոստանային կուլտուրաների մշակումը: Անասնաբուծության հիմնական ճյուղը

խոշոր եղջերավորներն են՝ 1284 գլուխ, որից՝ կովեր 718 գլուխ, արտադրող ցուլեր 9-12 գլուխ, ձիեր՝ 48:
մեղվապահությունը՝ 48 փեթակ մեղու, թռչունների թիվը՝ 2822:

3.7 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Համայնքում գործում է բուժկետ մեկ աշխատողով, որը անցել է ընտանեկան բժշկի վերապատրաստման փուլերը: Բուժ օգնությունը անվճար է:

Համայնքը չունի մանկապարտեզ:

Բարձր է գործազրկությունը, որոշակի գումար համայնքի ընտանիքների բյուջեն համալրում են արտագնա աշխատանքներից: Ցածր է զբաղվածության տոկոսը: Վարձատրվող աշխատանքով ապահովված են մոտ 130 մարդ, հիմնականում կրթության, տեղական ինքնակառավարման մարմիններումև տարբեր հիմնարկ ձեռնարկություններում (հիմնականում հանքաարդյունաբերությունում): Սոցիալական նպաստների համակարգում ընդգրկված են 7 ընտանիքներ, որից նպաստառու են 7 ընտանիք:

3.8 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ, ինչպես նաև դրանից հետո ձեռք բերված գույքով՝ հետևյալ արտահայտությամբ.

* գյուղապետարանի շենք - 1 միավոր՝ բարվոք
* հանդիսությունների սրահ - 1 միավոր՝ վերանորոգված
* գերեզմանատուն - 1 միավոր
* Բուլդոզեր Т-150 - 1 միավոր

3.9 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

* բնակչության անապահովության, հողերի օգտագործման անարդյունավետության,
* արտագնա աշխատանքը և բնակչության արտահոսքը

4.ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

* համայնքը սպասարկում է երթուղային 1 միկրոավտոբուս օրեկան և մշտական կապ ունի մարզկենտրոնի և հանրապետության մյուս քաղաքների հետ
* համայնքը 2003թ.-ից գազաֆիկացված է 99%-ով
* համայնքում հեռախոսակապը բջջային է:
* գործող առևտրական օբյեկտները երկուսն են են և բավարարում են բնակչության պարենային պահանջները
* բարեխառն եղանակը և առկա արոտավայրերը հիմք են անասնաբուծության զարգացման
* 100%-ով վերականգնված է գյուղի փողոցային լուսավորությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

* ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների, փողոցների անմխիթար վիճակը,
* զբաղվածության ցածր մակարդակը, աշխատատեղերի պակասը
* դժվար է արտադրված գյուղ մթերքների իրացումը

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի ղեկավարը, ավագանին հաշվի առնելով բնակչության պահանջները սահմանում են՝ համայնքը դարձնել բարեկարգ, բարելավել ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, օժանդակել գյուղատնտեսական արտադրության ավելացմանը: Առաջիկա 5 տարում համայնքի հիմնական նպատակային խնդիրներն են.

* գյուղատնտեսության զարգացման ծրագրերի իրականացում
* Պարբերաբար վերանորոգել փողոցային լուսավորության ցանցը
* համայնքային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում
* նոր հեղեղատարների կառուցում և մաքրում
* համայնքի կարիքների համար մարդատար տրանսպորտի ձեռքբերում
* հանդիսությունների սրահի հիմնանորոգում, շրջակա տարածքի ընդլայնում և բարեկարգում, համապատասխան գույքի ձեռք բերում
* հնարավորության սահմաններում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրի իրականացում, համայնքի սեյսմիկ քարտեզի ստեղծում
* Մանկապարտեզի բացակայություն. համայնքի համար կառուցել մանկապարտեզ, կա հիմնանորոգման ենթակա շենք համապատասխան տարածքվ: Աշխատանքները իրականացնելու համար անհրաժեշտ է դոնոր կազմակերպություն կամ որևէ ծրագիր

6. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԾՐԱԳԻՐ 1

ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԼԱՅՆՈՒՄ

Նկարագիրը Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի 2փողոցները համարյա լուսավորված են, բայց համայնքի ծայրամասային թաղամասերում լուսավորությունը բավարար չէ և այդթաղամասերում բնակվող բնակիչների շարժը երեկոյան ժամերին խաթարված է:

Նպատակը Նախատեսվում է համայնքի ծայրամասային թաղամասերում տեղադրել թվով էլեկտրասյուներ և լամպեր:

արդյունքները - Ծրագիրն իրականացնելուց հետո այդ թաղամասերի մարդկանց շարժը ավելի կակտիվանա և մարդիկ ավելի ազատ կմասնակցեն համայնքի առօրյա կյանքին և ընթացքին:

ԾՐԱԳԻՐ 2

ԵՐԵՔ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Նկարագիրը՝ համայքում այս 3 կամուրջները կարևոր դեր են կատարում բնակիչների համար, քանի որ համայնքի միջով է անցնում Աղստև գետը և այս 3 կամուրջները միակ կապող ճանապարհն են բնակիչների հողամասերի, խոտհարքների և ամենակարևորը նրանցից մեկը գերեզմաններ տանող ճանապարհն է այն կառուցված է 1970-ական թվականներիին նեղ է հնացած(խարխլված):

Նպատակը –նախատեսվում է այդ երեք կամուրջները ամրացնել երկաթե խողովակներով և լայնացնել կամուրջները

արդյունքները - Ծրագիրն իրականացնելուց հետո բնակիչները և հատկապես տարեցները ու երեխաները ավելի ապահով անցուդարձ կունենան դեպի գետի մյուս ափը:

ԾՐԱԳԻՐ 3

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Նկարագիրը - Վանաձոր- Դիլիջան մայրուղուց համայնքի փողոց թեքվող ճանապարհի հենց սկզբնական մասից գյուղամիջյան ամբողջ ճանապարհները անբարեկարգ են, կենտրոնական ճանապարհները ասֆալտապատվել են դեռևս խորհրդային տարիներին, իսկ ասֆալտի հետքը հազիվ է երևում: Ավելորդ է խոսել ոչ կենտրոնական ճանապարհների մասին, որոնք լի են ջրափոսերով և խորդուբորդներով: Խոտհարքները հեռագնա են, իսկ ճանապարհները դժվար անցանելի: Համայնքային բյուջեից տարեկան պարբերաբար բարեկարգվում, խճապատվում են գյուղամիջյան որոշակի հատվածներ, սակայն թեք տեղանքի, սելավների պատճառով նորից քանդվում է:

Նպատակը - բարեկարգել գյուղի փողոցները և ճանապարհները, մաքրել, կառուցապատել սելավատարները, ասֆալտապատել կենտրոնական ճանապարհը: Համայնքը դարձնել բարեկարգ:

խնդիր 1 -կատարել համայնքի փողոցների փոսային նորոգումներ, խճապատում, հարթեցում: Աշխատանքները կատարել համայնքի բյուջեի միջոցներով, պարբերաբար:

խնդիր 2 - կատարել կենտրոնական ճանապարհների հիմնանորոգում՝ ասֆալտապատում, 1-ին, 2-րդ փողոցների ամբողջ երկարությամբ: Նշված աշխատանքը հնարավոր չէ կատարել համայնքի բյուջեից: Դիմել ՀՀ կառավարությանը, կամ հիմնադրամներին ու միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցություն ստանալու հարցով: Նախնական արժեքը կկազմի 130մլն. դրամ:

արդյունքները - կբարեկարգվի համայնքի տարածքը, փողոցները, ճանապարհները, կվերանա փոսաջրերը, փոշին: Կկանոնավորվեն տրանսպորտի աշխատանքը, կբարելավվի մարդկանց կենցաղը: Կմշակվեն և կհնձվեն հեռագնա գյուղ. հողերը:

ԾՐԱԳԻՐ 4

ԿՈՅՈՒՂԱԳԾԻ ԿԵՆՏՐՈՆՈՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նկարագիրը –Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքում կոյուղագիծ ընդհանրապես չկա և գործում: կան անհատական, բայց դրանք անցնում են գլխավոր փողոցի երկայնքով և այդ խնդիր է հանդիսանում բնակչության համար:
Քանի որ համարյա բոլոր տներում արդեն կա ժամանակակից խոհանոցև սանհանգույց և արդեն կարիք կա համայնքում ունենալու կոյուղագծի կենտրոնացված համակարգ:

Նպատակը -նախատեսվում է ամբողջ համայնքի տարածքում զերոյից կառուցել նոր համակարգ

արդյունքները - Ծրագիրն իրականացնելուց հետո մարդկանց կյանքը ավելի կբարելավի, փողոցները ավելի մաուր և բարեկարգ կլինեն

ԾՐԱԳԻՐ 5

ՍՊՈՐՏ ԴԱՀԼԻՃԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ,

Նկարագիրը - Ֆիոլետովո համայնքի միջնակարգ դպրոցի սպորտ դահլիճը բարձր խոնավության հետևանքով գտնվում է անմխիթար վիճակում, շարքից դուրս են եկել հատակը պատուհանները խարխլված են, թափվել է պատերի սվաղը և ներկը, չունի ջեռուցման համակարգ, հանդերձարան և այլն: Դահլիճում են անցկացվում դպրոցի ֆիզկուլտուրային դասերը:

Նպատակը -

* ստեղծել աշխատանքի և ուսման համար նորմալ պայմաններ՝ ջեռուցում, հանդերձարան, լոգասենյակ,
* հնարավորությունների սահմաներում ստեղծել սպորտաձևերի խմբեր
* աջակցել համայնքի պատանիների և երեխաների առողջ ապրելակերպին

Խնդիրը -

* կազմել սպորտ դահլիճի վերանորոգման և ջեռուցման համակարգի նախագիծ նախահաշիվ
* վերանորոգման և ջեռուցման ծրագրի համար դիմել այլ հիմնադրամների ու միջազգային կազմակերպությունների՝ ֆինանսավորելու համար:
* ապահովել դահլիճի ընդհանուր ջեռուցում, փոխել պատուհանները

արդյունքները -

* կզարգանա սպորտը, կբացվեն նոր սպորտաձևերի խմբեր
* ուղղակի ազդեցություն կունենա

Ֆինանսավորումը կանխատեսվում է դոնոր կազմակերպությունների կողմից կամ որևէ ծրագրային ներդրումով:

ԾՐԱԳԻՐ 6

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նկարագիրը - Ֆիոլետովո համայնքում չկա գործող մանկապարտեզ, ինչպես նաև խաղահրապարակ: Ելնելով վերոգրյալից համայքնը ունի հնարավորություն սեփական բյուջեով կառուցել մանկական խաղահրապարակ:

Նպատակը - Մանկահասակ երեխաները չունեն խաղալու և իրենց ժամանակը զբաղեցնելու հնարավորություն:

արդյունքները – կառուցելով մանկական խաղահրապարակ կստեղծվեն հարմարավետ և հաճելի պայմաններ երեխաների համար, որոնք կունենան զբաղվելու և խաղալու հնարավորություն: Ծնողները կլինեն ապահով երեխաների համար և նրանց անընդհատ հետևելու կարիքը կպակասի:

ԾՐԱԳԻՐ 7

ՓՈՔՐ ԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նկարագիրը – Ֆիոլետովո համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Արտադրված կաթը մթերելու համար ցածր գներով հիմնականում հանձնում են վերավաճառողներին, հարևան համայնքում գործող կաթի գործարանին կամ կորցնելով իրենց ժամանակը, տեղափոխում են տարբեր քաղաքներ վաճառելու համար, որը նույնպես կախված է ծախսերից և տրանսպորտային միջոցների հետ:

Նպատակը – համայնքում կառուցել կաթի գործարան, հարմարավետ և ստանդարտներին համապատասխանող սարքավորումներով:

արդյունքները – կառուցելով կաթի գործարանը, կստեղծվեն նոր աշխատատեղեր, կթեթևացվեն մարդկանց առօրյա հոգսերը, կաթը կվերամշակվի տեղում՝ ստանալով բարձրորակ և բազմազան կաթնամթերքներ, որոնց վաճառքը կլինի ավելի հեշտ և արդյունավետ: Ստանալով բարձր եկամուտ բնակչությունը ավելի կզարգացնի անասնապահությունը:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 1

Ֆիոլետովո համայնքի Կոյուղի

Ծրագրի ամվանումը

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Խրախուսել մարդկանց կյանքի ավելի ժամանակակից և բարեկարգ ապրելակերպի					
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակների կյանկի բարելավման ապահովում					
	Ցուցանիշներ %՝	Ելակետային արժեք	Թիրախային արժեք			
		2022	2023	2024	2025	2026
						9,5 մլն դրամ
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.Բարեկարգ և կառուցված կոյուղագիծ					
	Ցուցանիշներ %՝	Ելակետային արժեք	Թիրախային արժեք			
		2022	2023	2024	2025	2026
						9,5 մլն դրամ
	2.Նոր կառուցված կոյուղագիծ					
	Ցուցանիշներ %՝	Ելակետային արժեք	Թիրախային արժեք			
		2022	2023	2024	2025	2026
						9,5 մլն դրամ
Ծրագրի հիմնական գործողությունները	Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, տրանսպորտ , սարքավորումներ և դոնոր կազմակերպության հայթայթում ինչն էլ հանդիսանում է ծրագրի հիմնական խնդիրներից մեկը: Ծրագրի հիմնական շահառուներն են համայնքի բնակիչները:					
Ծրագրի բյուջեն	Ընդհանուր բյուջեն՝ 9500,0 հազ դրամ					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, տրանսպորտ, դրամական միջոցներ					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դրամական միջոցների ձեռքբերումը					
Ծրագրի հիմնական շահառուները	Ֆիոլետովո համայնքի բոլոր բնակիչները:					
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝2022թ- Ավարտ՝ -2023թ.					
Ծրագրի համառոտ նկարագրություն	1.Բարեկարգ և կառուցված կոյուղագիծ 2.Նոր կառուցված կոյուղագիծ					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

Ֆիոլետովո համայնքի Գյուղտեխնիկայի ձեռ բերում

Ծրագրի ամվանումը

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Խրախուսել մարդկանց կյանքի ավելի ժամանակակից և բարեկարգ ապրելակերպի					
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակների կյանկի բարելավման ապահովում					
	Ցուցանիշներ %՝	Ելակետային արժեք	Թիրախային արժեք			
		2022	2023	2024	2025	2026
						9,5 մլն դրամ
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.Բարեկարգ և կառուցված կոյուղագիծ					
	Ցուցանիշներ %՝	Ելակետային արժեք	Թիրախային արժեք			
		2022	2023	2024	2025	2026
						9,5 մլն դրամ
	2.Նոր կառուցված կոյուղագիծ					
	Ցուցանիշներ %՝	Ելակետային արժեք	Թիրախային արժեք			
		2022	2023	2024	2025	2026
						9,5 մլն դրամ
Ծրագրի հիմնական գործողությունները	Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, տրանսպորտ , սարքավորումներ և դոնոր կազմակերպության հայթայթում ինչն էլ հանդիսանում է ծրագրի հիմնական խնդիրներից մեկը: Ծրագրի հիմնական շահառուներն են համայնքի բնակիչները:					
Ծրագրի բյուջեն	Ընդհանուր բյուջեն՝ 9500,0 հազ դրամ					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, տրանսպորտ, դրամական միջոցներ					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դրամական միջոցների ձեռքբերումը					
Ծրագրի հիմնական	Ֆիոլետովո համայնքի բոլոր բնակիչները:					

շահառուները	
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝2022թ- Ավարտ՝ -2023թ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	1.Բարեկարգ և կառուցված կոյուղագիծ 2.Նոր կառուցված կոյուղագիծ

Ինչպես նշվեց ֆինանսավորումը հիմնականում կկատարվի սուբվենցիոն կամ միջազգային կազմակերպությունների միջոցով և համանքի բյուջեով:

1. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

2. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի

Համայնքի ղեկավար՝ Ա.Ա.Չիչյով